Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91. 99
L-38

1320

ԼԷ 0

391.542-3
Ա-40

ԿԱՐՄԻՐ ԳԴԱԿԸ

(Արտատպած «Մշակ» լրագրից)

Տպարան Դ. Ա. Մրեւանցեանի
Բաքու 1904 թ.

891.99
L-38
891.541-3
L-38
19 NOV 2011
T810

ԼԲՕ

Ամ.

ԿԱՐՄԻՐ ԳԴԱԿԸ

(Արտատպած «Մշակ» լրագրից)

Տպարան Ե. Հ. Երեւանցեանի
Թիֆլիս 1904 թ.

0 2 .05. 2013

3,3.263

Дозволено Цензурою Тифлисъ, 11-го Іюня 1904 г.

ԿԱՐՄԻՐ ԳԴԱԿԸ

Ի՜նչ անսպասելի սիրուն, ծաղկած ու կանաչ էր այն շաբաթ օրը, որ իր ծոցից հանել էր ապրիլը։ Դեռ ե՛րբ էր, որ Թ... գիւղը լցվեց մարդկանցով։ Դեռ արեգակ չը կար, երբ գիւղի լայն ու հարթ հրապարակում սկսվեց անսովոր աղմկալի իրարանցում։

Առնում էին, ծախում էին։ Տարվայ բոլոր օրերը տօնավաճառ կայ այդ գիւղում։ Մի ամբողջ գաւառամաս իր հարիւրաւոր գիւղերով Թ... գիւղն է գիմում մի բան ծախելու եւ մի բան առնելու համար։ Բայց տարվայ մէջ մի շաբաթ կայ, որին անհամբեր սպասում են խանութպանները. եւ դա Զատկի Թաթախման օրն է։ Այդ օրը վրա են թափվում գաւառամասի բոլոր գիւղերը։ Տօն օր է, երկար ու բարակ սակարկութիւնների ժամանակ չը կայ, խարվելու մասին շատ չեն մտածում։ Առեւտուրը շահաւէտ է...

Ինչպէս արագ լցվել էր Թ... գիւղը, այնպէս էլ արագ դատարկվում էր։ Գործը վերջացնողը իսկոյն

ճանապարհ էր ընկնում։ Դեռ առաւօտ էր, բայց Թ... գիւղի շրջականները մի շատ գեղեցիկ տեսարան էին ներկայացնում։ Նա հարթավայրի վրա է տեղաւորված եւ ամեն կողմից լայն ու ուղիղ ճանապարհներ են մտնում նրա մէջ։ Ահա այդ ճանապարհների վրա դանդաղ ճռնչում էին սայլերը, ձիաւորները շտապում էին ժամ առաջ յետ թողնել տափարակները ու մտնել լեռների մէջ։ Ոմանք քշում էր իր էշը, որը կանչում էր յետ մնացած ընկերին։ Հետեւակ գիւղացիները, մեծ թէ փոքր, տղամարդ թէ կին, շտապում էին. խմբեր էին կազմում, ցրվում էին, աղմկելով գարնանային ըսքանչելի օդը իրանց խօսք ու զրոյցով։ Ամեն մէկը մի բան տանում էր իր հետ. ամեն մէկը ուրախ էր իր բաժնով։...

Վերին-Ձենացի Գաբրիէլն էր, որ դէռ իր բաժինը չէր առել։ Նա կանգնած էր Թ... գիւղի հրապարակի աջ կողմում, հին ու մեծ յարդանոցի կողքին եւ յամառ ու անշարժ նայում էր։ Արեգակը բարձրացաւ, բարձրացաւ, արդէն կէսօրվայ տեղն էր հասնում, բայց Գաբրիէլը դեռ գնողի էր սպասում։ Սպիտակ ձին նրա կողքին կախ էր արել ականջները բեռան ծանրութեան տակ։ Արդէն խանութպանները ներս էին հաւաքում իրանց ապրանքները. հրապարակում հատ-հատ մարդիկ էին մնացել, դրանք էլ, երեւի, մօտիկ գիւղերից էին. շտապելու կարիք չունէին։ Մինչդեռ Գաբրիէլը շտապում էր. նրա արջեւ բաւական երկար ճանապարհ կար...

Օրը այնպէս չէր նրա համար, ինչպէս նա էր սպասում։ Ի՞նչ յոյսով էր եկել այստեղ։ Համարեա կէս գիշեր էր, երբ նա վերկացաւ, շոր ու ձուաձեղի պէս կարմիր ու դեղին փայտ դարսեց սպիտակ ձիու մէջքին։ Սովորականից էլ շատ դարսեց, չը խնայեց խեղճ չորքոտանուն։ Ուզում էր լաւ գնով ծախել, հեշտ ու շուտ ծախել։ Հարկաւոր էր. նա պիտի մի սիրուն բան առներ իր Գրիգորի համար։

Տանը ամենքը քնած էին, Գաբրիէլը շտապով վերջացրեց իր գործը, շտապով ճանապարհ ընկաւ, մինչեւ անգամ չը գնաց տեսնելու քնած Գրիգորին, ինչպէս անում էր միշտ։ Արեւը ծագելուն պէս եկեղեցու զանգակները պիտի տային, իսկ եթէ նա լսէր զանգակների ձայնը, դա կը նշանակէր թէ շատ է նա ուշացել։ Իսկ ուշանալ չէր կարելի։ Պէտք էր այնպէս վերադառնալ տուն, որ Գրիգորը իր առած բանը հագած գնար թաթախման պատարագին։

Այդպէս էին վճռել մարդ ու կնիկ։ Կնիկը արել էր այն ամենը, ինչ կարող էին անել նրա ժատները։ Երէկ նա գնացել էր անդը, բաղել էր կանաչ, կապոյտ, կարմիր ծաղիկներ, որ նրանցով ձու ներկէ Գրիգորի համար։ Օրերով առաջ նա եփել էր ձուաներ եւ նրանց վրա կպցրել էր դեղին մոմի նախշեր։ Մնում էր գցել այդ ձուաները ներկի մէջ, վերցնել մոմը, որ պատրաստ լինէին խաչերով, թռչուններով, ծուռ ու մուռ գծերով զարդարված ձուաները։ Մէ-

կի վրա նա նոյն իսկ մարդու պատկեր էր դուրս բերել։ Գրիգորի պատկերը, ասում էր նա։ Եւ այսօր երեկոյեան ամենքը կը տեսնեն նրան, այդ պատկերը։

Մայրը արել էր ամեն ինչ։ Իսկ հայրը։

Այսօր փայտ չեն առնում։ Առնողի հաշւում չէր կաղ գինեվաճառը, որ արաւօտեանից մի երկու անգամ մօտեցել էր, գին առաջարկել, բայց ինչպէս միշտ, անաստուած գին։ Գաբրիէլը պատասխան էլ չէր տուել նրան։ Այդպէս են համարեա բոլոր գիւղացիները այդ կաղի հետ։ Ամենքը գիտեն, լաւ ճանաչում են նրան։ Եւ երբ առնողը միայն նա է, նշանակում է թէ բեռդ վերցրու ու յետ տար։

Յետ տանել։ Այսօր այդպիսի միտք չեր կարող գալ Գաբրիէլի գլուխը։ Դիմացի խանութի առջեւ չթի կոյտեր էին թափված, իսկ նրանց վրա դրված էր մի փոքրիկ կարմիր գդակ։ Առաւօտից նրա վրա էր Գաբրիէլի աչքը։ Առաւօտից նա իմացել էր, որ այդ կարմիր գդակը շատ լաւ կը լինէր Գրիգորի գլխին։ Որքան լաւ կարած է. բայց գոյնը, գոյնը։ Արեւի տակ վառվռում էր ալ-կարմիր կասրը։ Էլ ուրիշ բան չէր տեսնում Գաբրիէլը հրապարակում։ Սարերում չի լինի կարմիր ծաղիկ, որ այդպիսի գոյն ունենայ։ Մարդը ամբողջ սրտով կպել էր գդակին. նա իրանը պիտի լինէր։

Մի երկու անգամ Գաբրիէլի սիրտը թրթռաց. մարդիկ մօտեցան չթերին, վերցրին գդակը, շուռ տուին նրանց ձերքերում։ Ծախողը ինչ-որ բան

ասաց, աշխատում էր ծախել, մի քանի անգամ յետ կանչեց գնողներին։ Բայց—Աստուծու բանն էր, Գաբրիէլը այսպէս հասկացաւ—գդակը էլի իր տեղում մնաց։ Բախտը Գրիգորինն էր։ Թող նա դնէ իր գլխին, եւ այն ժամանակ կը տեսնենք՝ կը լինի գիւղում նրա պէս մի ուրիշը։ Չի լինի, ի հարկէ։ Գաբրիէլը նայում էր իր փայտին, նայում էր եւ հեռւում կապուտին տուող սարերին։ Իրանց սարերը ըն են։ Եւ այն տեղից, բարձր գագաթից, Գրիգորը, մօր փեշից բռնած, նայում է, կարծես ձայն է տալիս, ուզում էր։ Եւ մայրն էլ ասում էր իր տղամարդին, որ առանց կարմիր գդակի տուն չը գայ։

Ո՛չ. առանց նրան չի գնայ Գաբրիէլը։ Զատիկը ամբողջովին մի կարմիր գդակ էր դարձել նրա համար։ Ուրիշ ոչինչ չէ երեւում նրա աչքին։

Իսկ հրապարակը բոլորովին դատարկվել էր, իսկ դարնան օրը կարճանում էր Յոյսը կորցրեց Գաբրիէլը, ու բռնելով ձիու կապը, սկսեց խանութից խանութ ման գալ, խնդրել որ առնեն իր փայտը։ Այդ էլ չօգնեց։ Մի երկու տեղ նրան ծաղրեցին այդ օրվայ աշխատանքից հալարտացած մանրավաճառները։ Գաբրիէլը տղամարդ էր, կորածներից չէր։ Նա ինքն էլ գիտէր խօսել պատասխաններ տալ։ Բայց այսօր խօսելու տեղը չէր։ Կարմիր գդակը կապել էր նրա բերանը։ Յանկարծ նա տեսաւ, որ կարմիր գդակը այլ եւս չը կայ։ Չէ՞ երեւում։ Ձիու կապը բաց ընկաւ նրա ձեռքից և առաջին բանը, որ

արաւ նա, ձին այդտեղ թողնելու դէպի խանութը վազելն էր։ Գնաց, հարցրեց։ Ստուծու բանն էր նորից այսպէս հասկացաւ նա—գդակը ծախված չէր, այլ միայն խանութի ներսն էր տարված։

Բայց էլ չը սպասեց Գաբրիէլը։ Ճարը էլի գինեվաճառն էր։ Այսպէս էին ասել նրա պէս շատերը։ Նա տարաւ փայտը, չը նայեց էլ գինեվաճառի երեսին և միայն յայտնեց, որ համաձայն է։ Կաղը սկսեց սաստիկ հայհոյել նրան սա էլ սովորական բան էր։ Գաբրիէլը լռեց, պատասխանը մի ուրիշ անգամի թողեց, զօռով կրծոտում էր շրթունքները որ լուռ մնայ։ Մի հինգ կոպէկ էլ պակաս տուեց գինեվաճառը ասելով, թէ այժմ ինքն այսպէս է ուզում։ Այդ էլ ոչինչ։

Փողը բուռի մէջ պինդ սեղմած, Գաբրիէլը գնաց գդակ ծախողի մօտ։ Մի յիսուն կոպէկի բան էր, աւել-պակաս չը խօսեց, տուեց առաւ ու գնաց։

Սպիտակ ձին քայլում է մէծ աշխոյժով։ Գաբրիէլը նստած է նրա վրա. գոհ սրտով տուն վերադարձող մի գիւղացի է դա։ Երբեմն երգելն է գալիս, երբեմն ծիծաղ. մտերմաբար խօսում է ձիու հետ, անդադար շարժում է ոտները, որ ձին իմանայ թէ պէտք է արագ գնալ։ Ճիպոտ չէ բանեցնում նա. և չէ էլ կարող բանեցնել. իր ճիպոտի ծայրն է անցկացրել կարմիր գդակը և տանում է նրան գրօշակի պէս, բարձր պահած։ Այդպէս լաւ է. սիրուն գրդակը չի փչանայ, չի ծռմռվի, նրա վրա թող չի

նստի։ Եւ շուտ-շուտ ցածրից դէպի վեր է նայում Գաբրիէլը, տեսնում է թէ ինչ է տանում իր հետ, լիաբերան ժպտում է, մատաղ է գնում Գրիգորին։ Ապա գլխի շարժումով փափախը աչքերն է գցում, որ պաշտպանվի արևի թեք ճառագայթներից ու նայում է սարերին։ Ճանապարհ դեռ շատ կայ։

—Սպիտակ ձի, քեզ տեսնեմ, գիմում է նա ձիուն, շոյելով նրա բաշը.—մինչեւ ժամը դուրս գալը ինձ տեղ կը հասցնես...

Ձին կարծես հասկանում է, գլուխը սաստիկ շարժելով առաջ է գնում։ Մի մի էլ Գաբրիէլը ձեռքով շօշափում է ձիու կողքից կախ արած փոքրիկ քսակը։ Դա էլ մի շատ հարկաւոր բան է։ Տղամարդ ունեցող տունը այս երեկոյ անպատճառ բրինձի ճաշով պիտի թաթախվէր։ Եւ Գաբրիէլ, իր տան այդ անունը պահելու համար, թափ էր տուել գրպանները, վերջին կոպէկներով երեք ֆունտ էժանագին բրինձ էր առել, ածել քսակի մէջ։

Կարմիր գդակը սեղմ ճօճում էր ճիպոտի ծայրին։ Ճանապարհին շատ քիչ մարդ էր պատահում։ Տիրում էր մի ահագին լռութիւն, որ վախեցնում էր մանաւանդ այն տեղերում, ուր ճանապարհը մտնում էր բլուրների մէջ։ Շատ էին այդ բլուրները եւ նրանք ունէին տխուր վախեցնող հոչակ։ Միակ բանը, որ սիրտ էր տալիս միաւոր մարդուն անցնել վայրերով, այն էր, որ բլուրների շարքից յետոյ ճանապարհը գնում էր դէպի սարը։ Այնտեղ արդէն

բաց աշխարհ էր, այնտեղ սկսվում էին Վերին-Զէնի հողերը։

Գաբրիէլի վրա մի ինչ որ տխրութիւն եկաւ. նա չէր էլ ուզում իր շուրջը նայել։ Չէր կարողանում նայել մանաւանդ ագռաւներին, որոնք ծանր թռչում էին թումբից թումբ, աղաղակում էին, կարծես պատում էին որսի վրա։ Բայց դեռ օր կար եւ սպիտակ ձին իր աշխոյժը չէր կորցնում։

Ծանր բօսէները անցան։ Գաբրիէլը յանկարծ ուղղվեց, զուարթացաւ, կարծես քնից սթափվեց. նոյն իսկ սկսեց բթի տակ շվշվացնել։ Հասել էր Սպիտակ բլուրին։ Սպիտակ էր անուանվում նա այն պատճառով, որ գագաթից մինչեւ համարեա կէսը լերկ լուսնահողից էր. կարծես մէկը կանգնել էր նրա ծայրին եւ մոխիր ու քարակոյտեր էր թափել դէպի ցած, լանջերով։

Այժմ փառք Աստուծու... Գաբրիէլը խորը հառաչեց և աւելի եւս սաստիկ շարժեց իր ոտները։ Ուզում էր, որ ձին էլ շուտ հասնէ Սպիտակ բլուրի այն ծանօթ լանջին, որտեղից երեւում էր Վերին-Զէնի շրջակայքը...

Նա հասաւ այդ տեղին։ Բայց այստեղ էլ պատահեց երկու մարդկանց։ Առջեւից էին գալիս նրանք, շտապում էին։ Հայեր էին. համարեա կանգ չառնելով, դիմեցին Գաբրիէլին։

—Եղբայր ուր ես գնում։

—Տուն, պատասխանեց Գաբրիէլը և նայեց ճիպոտի ծայրին։

—Ճանապարհդ որտեղով է։

—Ուղիղ, Վերին-Զէնը։

—Եղբայր, հայ քրիստոնեայ ես, յետ դարձիր։

—Ի՞նչ կայ։

—Առջեւումդ վատ մարդիկ կան, ասաց նրանցից մէկը. —մենք տեսանք ձիաւոր էին, յետ դարձանք, գնում ենք այս մօտիկ գիւղը, գիշերը այնտեղ կը մնանք։ Ե՛կ, եկ, խեղճ ես... Քեզ համար էլ տեղ կը գտնենք։ Այնտեղ մենք բարեկամներ ունենք...

Գաբրիէլը հասկացաւ, թէ ինչ են ասում այդ անծանօթ մարդիկ։ Նա կանգ առաւ, բայց հանդիպողները չը ոպասեցին նրան, շարունակեցին իրանց ճանապարհը, շարունակ կանչելով որ նա յետ դառնայ։

Իսկ Գաբրիէլը յետ չը դարձաւ։ Նրա ականջները այդ երկուսի հետ էին, իսկ աչքերը... Սպիտակ բլուրի լանջից բացվել էր ծանօթ տեսարանը։ Առջեւում, ծմակոտ սարի լանջի վրա, սպիտակին էր տալիս մի փոքրիկ եկեղեցի։ Նա Վերին-Զէնի կողքին էր գտնվում, գիւղի վանքն էր։ Ամեն տեղ հսկայական շուաքներ էին տարածված, ամեն տեղ արդէն երեկոն էր գալիս, միայն վանքն էր, որի վրա դեռ արեւ կար։ Անտառների մութ-կապոյտ աշխարհում ի՞նչպէս էր փայլփլում վանքի ամբողջ մարմինը։ Այստեղից նա ձիունից շնված էր երեւում. այստեղից նայողն էր տեսնում, թէ ինչպէս արեւի

վերջին լոյսերը պսակ էին կապել նրա բարձր գրմբէթի շուրջը...

Վաղը առաւօտեան այդտեղ պիտի լինէր պատարագը։ Դեռ լոյսն ու մութը չը բաժանված, գիւղը այնտեղ պիտի գնար։ Գաբրիէլը մատաղ էլ ունէր։ Տանը կապած էր շաղ սև ոչխարը. ինքն էր առել։ Իր կեանքում դա երկրորդ անգամն էր, Գրիգորի հիւանդութեան ժամանակն էր խոստացել։ Խոստացել էր իր ձերքով մորթել ս. Գէորգի շեմքի առջեւ, աղօթարանը կարմրելու բոպէին։

Եւ նա մէկ էլ նայեց ճիպոտի ծայրին, ձեռքով շօշափեց փոքրիկ բսակը։ Մի անգամ էլ նայեց վանքին, երեսին խաչ հանեց ու ոտներով խփեց ձիու կողերին։ Երկու անծանօթ փաղչողները հեռուից էլ մի անգամ կանչեցին։ Բայց Գաբրիէլի ձին յետ չը դարձաւ։ Նա շարունակեց ճանապարհը, նա չէր կարող չը շարունակել

Մի փոքրիկ առուակ էր հոսում Սպիտակ բլուրի միւս կողմում, մի լուռ ու խեղճ առուակ։ Այդտեղ իջաւ Գաբրիէլը։ Ձին ջուր խըմեց, իսկ նա մինչեւ այդ իր ճիպոտը խրեց համեստի շուաններից մէկի արանքը և կարմիր դդակը էլի դրեց նրա ծայրին։ Այդտեղից նա ոտով պիտի գնայ։ Ճանապարհը դէպի սարն է, ձին չը պիտի յոգներ որ շուտ գնար։ Շուտ գնալը աւելի եւս հարկաւոր էր. վտանգ կար շորս կողմը, իսկ վտանգի մէջ գիւղացին յոյս ունի միայն իր ոտների, մէկ էլ Աստուծու վրա...

Գնում էր Գաբրիէլը և ինքն իրան սիրտ էր տալիս։ Աւազակներ, ահ... Կան աւազակներ ճշմարիտ է, բայց ինչ գործ ունեն նրանք իր հետ. խեղճ մարդուն նրանք չեն դիպչում, ի՞նչ պիտի տանեն։ Մի՞թէ չեն։ Բայց հեռուից էլ կարելի է տեսնել, որ ձին անասնով է ձի։ Գառաւ, շոր ոսկոր մի բան է, որ միայն գիւղացուն կարող է հարկաւոր լինել։ Ասում են, Բէշիր օղլու խումբն է. ասում են, Բէշիր օղլին արնախում է...

Գաբրիէլը աշխատում էր մտքից հեռացնել աւազակներին։ Շորս կողմում տիրած խորին լռութիւնը նրան յուսադրում էր, որ մարդ չը կայ այս կողմերում։ Միայն երբեմն ագռաւի ձայնն էր գալիս, նա էլ հեռու էր, երեւի բլուրների վրա։

Բաւական տեղ գնաց Գաբրիէլը. մի երկու ցածրիկ լանջ էլ, և Վերին-Զենի հողերին կը հասնէ։ Բայց այս ի՞նչ էր։ Ձայն։ Կասես թէ մարդկային մի խօսքի պատառ եկաւ անցաւ ճանապարհի վրայով. կասես թէ այդ պատառին հետեւեց մի ուրիշը, բայց այս մէկը տեղ չը հասաւ, մարեց կորաւ լանջի ետեւում։ Ի՞նչ էր, ո՞րտեղից էր։ Փոքրիկ քամի կար, երեւի նա էր այդպէս խաբողը։

Գաբրիէլը աչքերը փակեց. եթէ մարդիկ էլ են, նա չէ ուզում տեսնել նրանց։ Նա խեղճ է. շատ խեղճ է, նրան չեն դիպչի։ Որքա՜ն այժմ նա վստահ էր իր խեղճութեան վրա. որքա՜ն լաւ պաշտպանված էր համարում իրան իր այդ խեղճութեամբ։

Գարձեալ ամեն ինչ լռեց չորս կողմում։ Գարձեալ Գաբրիէլը ասում է իրան, որ ոչինչ չը կայ։ Հին ճանապարհի միջով էր բարձրանում, իսկ Գաբրիէլը աշխատում էր թփերի ետեւով անցնել. էլի պաշտպանութիւն է։

Նա յետ չէր նայում։ Եթէ նայէր, կը տեսնէր իր ետեւում, ձորի միւս կողմից բարձրացած լանջի վրա մի քանի սեւ կէտեր։ Դրանք մարդիկ էին։ Երկուսը դրաղ բռնեցին. — մարդը, թէ կարմիր գդակը։ Հարցը պիտի վճռէր արագաձիգ հրացանը։ Ամբողջովին փամփուշտների շարաններով ծածկված մէկը չոքեց ձախ ծնկան վրա։ Նա հպարտանում էր, որ ամբողջ խմբի մէջ ինքն է ամենալաւ հրացանաձիգը և իր հրացանի նմանը չունի ոչ ոք։ Դրա ապացոյցը պիտի լինէր սպիտակ ձիու մէջքին տնկած ճիպոտի ծայրին մեղմ օրօրվող կարմիր գդակը։

Ծխաց հրացանը, լսվեց մի խուլ բոմբիւն։ Գաբրիէլը ձեռքը սեղմեց մէջքին, օրօրվեց, չոքեց։ Կարմիր գլխարկը շարունակում էր ճոճել ճիպոտի ծայրին։ Լանջի մարդիկ ըրբջացին, իսկ հրացան արձակողը կատաղած թքեց, դէն շրջրջեց հրացանը։ Վատն էր։

Ոչ ոք տեղից չը շարժվեց։ Դա որս չէր. աւազակներն էլ գիտէին, որ խեղջ մարդ է գնացողը, թալան չը կայ։ Նրանք միայն հրացան էին փորձում։ Եւ շուտով անհետացան, չը կամեցան էլ իմանալ, թէ ինչ մնաց սարը տանող ճանապարհի վրա։

Իսկ այդ ճանապարհին երկար գիծ էր թողնում արիւնը։ Գաբրիէլը շարժվել կարող էր. և նա կանգ չառաւ։ Գնում էր, գնում բայց ծանր, կիսամեռ։ Ոտները ծալվում էին աչքերը մթնում էին։ Ձառիվերեր էին գալիս նրա առջեւը. բայց նա կանգնել չը գիտէր, փորսող տալով էր բարձրանում։ Ձին հանդարտ քայլում էր նրա առջեւից։

Այժմ բոլորովին անվերջ էր ճանապարհը։ Աստղերը վաղուց էին ծածկել երկնակամարը։ Նրանցից շատերը երկար ճանապարհ կտրեցին, արդէն մարում էին, իսկ նրանց տակ անտառոտ սարի լանջերով դէպի վեր էր սողում վիրաւորը, թողնելով իր ետեւից կարմիր գիծ... Ահա նա ընկաւ, նստեց փորձեց վեր կենալ, նորից ընկաւ։ Մի քանի անգամ կրկնվեց այդ մաքառումը կեանքի և մահվան մէջ։ Գաբրիէլը ահագին ոյժ գործ դնելով աջ ու ձախ դարձրեց իր սարսափելի ծանր, կապարեայ գլուխը։ Տեսնել էր ուզում։ Նկատեց արդեօք, որ հասել է իր արտին։

Գլուխը ընկաւ մի քարի վրա, նա մի խռռոց արձակեց։ Լոյսը օդի մէջ շատանում էր։

Անցան ժամեր։ Վեր, կացաւ Վերին-Ձէնը։ Լոյս աստղը ծագել էր, ս. Գէորգը սպիտակին էր տալիս մութի մէջ։

Այդ միջոցին գիւղը մտաւ սպիտակ ձին։ Նրա մէջքի վրա, ճիպոտի ծայրին, տատանվում էր կարմիր գդակը. նրա կողքին կապած էր փոքրիկ քսակը։

Իսկ Գաբրիելը ընկած էր իր արտի մօտ կանաչ խոտերը նրա շուրջը հանգարտ օրօրվում էին իրար համբուրում...

Լէօ

ՀԱՅԿԱՅԻՆ

<< Ազգային գրադարան
NL0348049



Դիմել՝ Баку, Пороховая, № 27
В. А. Туманянцу.

33263